

նաղցիի յիշատակները ի՛նչ ժլատ փշրանքներ կը հայ-
թայթեն մեզի, երբ փորձուինք վերակազմել մեր ժողո-
վուրդը իբր ապրում ու պատմական իրողութիւն: Մեր
ամիրաները, սակայն, մոմիայ, մեռել, բառ ըլլալէ առաջ
ի՛նչ հսկայ խտութեամբ նիւթեր են, ողբերգական ու
փարթամ գեղեցկութեանց սրտառուչ հանդէս: Արդի վէ-
պը այդ աշխարհէն ինչե՛ր ընդունակ է վերբերելու, որոնց
մասին չենք իսկ մտածած: Քառասուն տարի առաջ,
գիւղապետին ապարանքը կամ ամէնօրեայ այցելութիւն-
ներուս կը պարզէի թաքուն խորհուրդը, ուժը, անհասկնա-
լի, բայց իրաւ, տիրական հովանին ու թաքուն խորհուրդը,
ուժը, անհասկնալի, բայց իրաւ, տիրական հովանին ու
զիս կը ձգէր երազուն, գիծովը մեր մեծերուն, որոնք կըր-
ցեր էին ընդդէմ աշխարհ մը արգելքներու, մալարիային
ու թալանին, եաթաղանին ու մանկահաւաքման սա տե-
սակ պալատներ գեղակերտել (պատմած եմ «Մնացոր-
դաց»ի մէջ մեր գեղին ալ պալատը): Ու չունիմ այսօր ալ
պայծառ թափանցում: Գիտեմ, թէ Պոլսոյ երանելի, ամե-
նահաս խմբագիրները չեն վարանիր նման բացառու-
թիւնները իբր փաստ ընդհանրացնել թուրքերուն առա-
քինութիւնները յաւերժող,- բառեր, որոնք մինչեւ երէկ
դեռ շրջաբերութեան մէջ էին, առանց կարիքի, քանի որ
ժողովուրդը, որ ընդունարանն էր բոլոր այդ բարիքնե-
րուն, գոհուած էր աւելի իրատես հաշիւներու: Էր եր-
բեմն, ուր թուրքը կ'անգիտանար իր հպատակները, ման-
կահաւաքումէ ու դրամական վայելքէ դուրս, տարբեր
հետաքրքրութեանց կրկէսին: Փա՞ստ: Պտտեցէք ամէնէն
մօտ իրենց լուծէն ազատագրուած արաբական երկիր-
ները ու ցոյց տուէք մէկ հատիկ հետք, որ խօսէր չորս
դարերու տիրապետութենէ մը: Այսօր ոչ ոք կը հասկնայ
անոնց լեզուն իսկ: Կէս դար առաջ կ'իմն ալ, անոնց ախոր-
ժակներուն մէջ, իջած էր երկրորդ գիծի, քանի որ իրենց
կիները կը մնային անմշակ, անդադար պատերազմները,
որուն նօսրացուցած ըլլալուն միջինէն շատ անդին:
Թուրքերուն վերանորոգ ու կրկին մկրտուած ազգայ-